ՀՏԴ 941(479.243)
Պատմություն

Տարոն ՀԱԿՈԲՅԱՆ
ԱրՊՀ, Պատմության ամբիոն, պ.գ.թ.

ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ (1994 թ. ՆՈՅԵՄԲԵՐ – 1995 թ. ՀՈՒՆԻՍ)

Քաղաքական զարգացումների հետևանքով ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը վերածվեց ավտորիտարի, որը հետագայում իր բացասական դրդումը թողեց հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Այդուհանդերձ, կառավարման նոր համակարգի ստեղծումը հետպատերազմյան շրջանում ոչ միայն հնարավորություն տվեց արագ հաղթահարելու պատերազմի հետևանքները, այլև ուշադրության կենտրոնում պահելու պետական ինստիտուտների և ենթակառուցվածքների ստեղծման, սոցիալ-տնտեսական դրության հիմնախնդիրների լուծման հարցերը:

ԼՂ-ում պետական շինարարության գործընթացը, հաղթահարելով իր ճանապարհին ծագած վայրիվերումները, շրջանցելով քաղաքական ասպարեզում առաջացած խոչընդոտները, ադրբեջանական ագրեսիայի դեմ ձեռք բերված վճռական հաղթանակների շնորհիվ հաստատեց իր շարունակական լինելու իրավունքը:

Բանալի բառեր՝ *Պաշտպանության խորհուրդ, Պաշտպանության պետական կոմիտե, նախագահ, Պաշտպանության բանակ, վարչապետ, փոխվարչապետ, նախարար, կառավարություն:*

Т. Акопян

ПРОЦЕСС ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА И ИЗМЕНЕНИЕ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ В НКР (НОЯБРЬ 1994г. – ИЮНЬ 1995г.)

В результате политических процессов демократически созданное государство превратилось в авторитарное, что в последствие негативно повлияло на социально-политическую жизнь республики.

Тем не менее, создание новой формы правления в послевоенный период не только позволило быстро преодолеть последствия войны, но и держать в центре внимания вопросы решения проблем создания государственных институтов и инфраструктур, а также проблем в социально-экономической сфере.

Процесс государственного строительства в НКР, преодолевая препятствия в политической сфере, укрепило свое право на продолжительность благодаря решительной победе над азербайджанской агрессией.

Ключевые слова: *Совет обороны, Государственный комитет обороны, президент, Армия обороны, премьер-министр, вице-премьер, министр, правительство.*

T. Hakobyan

THE PROCESS OF STATE BUILDING AND THE CHANGES IN THE GOVERNING FORM IN THE NKR (NOVEMBER 1994- JUNE 1995)

As a result of the political processes, the democratically formed state turned into an authoritarian one which later negatively affected the social-political life of the republic.

Nevertheless, the creation of the new form of governing system in the postwar period allowed not only to overcome the consequences of the war but also to concentrate on the issues of building of state institutes and infrastructures as well as the problems in the social-economic sphere.

Overcoming the obstacles in the political sphere, the process of state building in the NKR ensured its right on continuance due to the resolute victory over the Azerbaijani agression.

Keywords: *Defense Council, Defense State Committee, President, Defense Army, Prime-Minister, Vice Prime-minister, Minister, Government*

1992 թ. հունիս-օգոստոսյան ռազմական անհաջողությունները, այդ թվում և Հյուսիսային Արցախում, հետևանք էին ոչ միայն ռազմական, այլ ներքին քաղաքական գործոնների: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ Գերագույն խորհրդի (ԳԽ) նախագահությունը փորձեց գործադիր և ռազմական իշխանությունները կենտրոնացնել Պաշտպանության խորհրդի ձեռքում: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտների[1]:

Ակնհայտ է, որ ԼՂՀ ԳԽ նախագահությունը երկրում գոյություն ունեցող ռազմաքաղաքական ճգնաժամային պայմաններում կանգնել էր երկընտրանքի առաջ. կամ պահպանել՝ իշխանությունը կամ զիջել հակառակ թևին: Առճակատման գնալը սպառնալիքի տակ էր դնելու երկրի անվտանգությունը: Ճահումյան մասը 1992 թ. հունիսյան ռազմական անհաջողություններից հետո ԼՂՀ-ում օրինավոր ընտրված իշխանության ներկայացուցիչները, գիտակցելով ստեղծված ծանր իրավիճակը, դրսևորելով քաղաքական կամք և պատասխանատվության զգացում ժողովրդի առաջ, որոշում կայացրին իշխանությունը հանձնել ՀՀ նախագահ Լ.Տեր -Պետրոսյանի համար ընդունելի թիմին:

1992թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ), որի նախագահ նշանակվեց Ռոբերտ Քոչարյանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին Նախարարների խորհրդի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ինչպես նաև ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված էին «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահն օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով:

ԼՂՀ իշխանական համակարգում կատարված ակնհայտորեն ստիպողական փոփոխությունները չվերացրին պաշտոնական Երևանի և Ստեփանակերտի

---

[1] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.****, ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994թթ.), Եր., 2011, էջ 199:*

միջև եղած հակասությունները: Խաղաղարար բանակցային գործընթացում ծագած նոր տարաձայնությունները և որոշ ներքին գործոններ ավելի սրեցին դրանք, ինչը բացասական ազդեցություն ունեցավ ԼՂՀ-ի ներքաղաքական կայունության վրա՝ սպառնալիք ստեղծելով երկրի անվտանգությանը: Հենց այդ հանգամանքից օգտվելով՝ ՀՀ նախագահը սաստկացրեց ճնշումը ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա, որի արդյունքում հրաժարական տվեց ԼՂՀ ԳԽ պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, իսկ ԳԽ նախագահի պարտականությունները դրվեցին Կ.Բաբուրյանի վրա:

Թվում էր, թե ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հրաժարականով պետք է հանդարտվեր ներքաղաքական լարվածությունը, սակայն 1994թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների ընթացքը ցույց տվեց հակառակը: Դա վառ կերպով դրսևորվեց դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանում, որը ուղենշային և բախտորոշ դեր խաղաց ԼՂՀ-ի քաղաքական կյանքում:

1994թ. նոյեմբերի 9-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի ժամանակ որոշում կայացվեց նստաշրջանը հրավիրել 1994թ. նոյեմբերի 23-ին[1]: Օրակարգում ներկայացվեցին մի շարք հարցեր, այդ թվում՝ ԼՂՀ ռազմական դրության ժամկետը երկարաձգելու և ԼՂՀ կառավարման համակարգի կատարելագործման մասին: Սակայն անհայտ պատճառներով նստաշրջանը տեղի չունեցավ:

Այն կայացավ դեկտեմբերի 21-ին: Հատկանշական է, որ նստաշրջանը սկսվեց առանց օրակարգի[2], և այն ձևավորվեց նստաշրջանի ընթացքում:

Ուսումնասիրելով դեկտեմբերի 21-23-ին տեղի ունեցած ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի սղագրությունը, ինչպես նաև մասնակի պահպանված տեսաձայնագրությունը[*]՝ պարզ է դառնում, որ ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող քաղաքական գործիչների և ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարության՝ մասնավորապես ՊԲ հրամանատար Ս.Բաբայանի կողմից ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ ԳԽ որոշ պատգամավորների վրա: ԼՂՀ ԳԽ նախագահությունը մեղադրվեց անգործության մեջ: Հնչեցին հայտարարություններ ԼՂՀ կառավարման համակարգում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին, անգամ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանին նախագահ չընտրվելու դեպքում 10 օրվա ընթացքում ԳԽ-ն ընդհանրապես ցրելու և նոր ընտրություններ անցկացնելու մասին[3]:

1994թ. դեկտեմբերի 21-ին ԳԽ-ի նիստում որոշում կայացվեց ԼՂՀ-ում հիմնել նախագահական կառավարման ինստիտուտ, ընդունվեց «ԼՂՀ Նախագահի մասին» օրենքը, ըստ որի՝ հանրապետության նախագահը պիտի ընտրվեր 5 տարի ժամկետով՝ ուղղակի փակ գաղտնի ընտրությամբ: Սակայն,

---

[1] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, գ. 2, պ.մ 23, կ.3, թ. 9:*

[2] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, գ. 2, պ.մ 25, կ.3, թ. 90:*

[*] *Թեմայի ուսումնասիրության ընթացքում ծագել են որոշակի դժվարություններ, ցավոք, ԱՀ պետական և ԱԺ ընթացիք արխիվներում ԼՂՀ առաջին գումարման ԳԽ նախագահության նիստերի սղագրություններից բացակայում են ռազմական և քաղաքական մի շարք գործիչների աղմկահարույց ելույթները, ինչպես նաև պետական շինարարությանը վերաբերող արխիվային կարևոր նյութեր: Ուստի առաջադրված խնդիրները պարզաբանելու համար անհրաժեշտ է եղել օգտագործել անձնական արխիվներ:*

[3] *Տես՝ Հեղինակի անձնական արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանի 1994թ. դեկտեմբերի 21-23 նիստի տեսաձայնագրություն:*

հաշվի առնելով ռազմական դրության պահանջները, ԳԽ որոշեց ԼՂՀ առաջին նախագահին ընտրել երկու տարի ժամկետով՝ փակ գաղտնի քվեարկությամբ[1]:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 22-ին ընդունվեցին «ԼՂՀ Խորհրդարանի մասին»[2], «ԼՂՀ կառավարության մասին» օրենքները[3]: Այնուհետև խորհրդարանն անցավ ԼՂՀ նախագահի ընտրությունների հարցին: Առաջադրվեց 2 թեկնածու՝ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը և ԼՂՀ ԳԽ պատգամավոր Մ. Պետրոսյանը, որը, սակայն, հանեց իր թեկնածությունը: «ԼՂՀ Նախագահի մասին» ԼՂՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ փակ գաղտնի քվեարկությամբ (51 կողմ, 2 դեմ) ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռ.Քոչարյանը[4]

Դեկտեմբերի 23-ի առավոտյան նիստում տեղի ունեցավ ԼՂՀ նախագահի երդման հանդիսավոր արարողությունը, այնուհետև, շարունակելով նիստը, ընդունվեց «ԼՂՀ Խորհրդարանի ընտրությունների մասին» օրենքը[5]:

Այսպիսով՝ պաշտոնական Երևանի միջամտության արդյունքում ԼՂՀ կառավարման համակարգում կատարվեցին ստիպողական փոփոխություններ, որոնց հետևանքով երկիրը խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց նախագահականի: Ներքաղաքական կայունության ապահովման գործում մեծ դեր խաղաց օրենսդիր մարմնի դրսևորած քաղաքական կամքը և պատասխանատվության զգացումը նորաստեղծ պետականության ու երկրի ժողովրդի ապագայի հանդեպ:

Որպես հիշատակված պետաշինարարական գործընթացների շարունակություն՝ 1995թ. փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ-ն ընդունեց խորհրդարանի ժողովրդական պատգամավորների վաղաժամկետ ընտրություններ անցկացնելու մասին որոշում[6]: Հանրապետության տարածքում կազմավորվեց 33 ընտրատարածք՝ նախկին 81-ի փոխարեն. համապատասխան փոփոխության ենթարկվեց նաև պատգամավորական տեղերի քանակը:

1995թ. ապրիլի 30-ին անցկացվեցին խորհրդարանի վաղաժամկետ ընտրություններ, որոնք կազմակերպվեցին մեծամասնական ընտրակարգով[7]: Ընտրությունները տեղի ունեցան 33 ընտրատարածքից 31-ում, իսկ 2-ում՝ պատգամավորության մեկական թեկնածուների ինքնաբացարկի պատճառով չկայացան: ԼՂՀ ԿԸՀ 1995թ. մայիսի 5-ի նիստի որոշմամբ գրանցվեց 23 պատգամավոր: 1995թ. հունիսի 30-ին 5 ընտրատարածքում կայացան նոր ընտրություններ:

ԼՂՀ խորհրդարանի արտահերթ ընտրություններին հետևեցին միջազգային անկախ դիտորդներ, մասնավորապես՝ Գերմանիայի Բունդեստանգի, ՌԴ Պետական դումայի, Մոսկվայում գործող Ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոնի, Հայաստանի Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ[8]:

---

[1] *Տե՛ս ԱՀ պետարխիվ, Ֆ. 254, ց. 2, պ.մ 25, կ.3, թ. 52:*
[2] *Նույն տեղում, թ. 90-137:*
[3] *Նույն տեղում, թ.138-146:*
[4] *Նույն տեղում, թ.150:*
[5] *Նույն տեղում, թ.154-187:*
[6] *Տե՛ս ԱՀ ԱԺ ընթացիկ արխիվ, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանին 1995թ. փետրվարի 14-ի նիստի սղագրություն:*
[7] *Տե՛ս* ***Օհանջանյան Մ.,*** *Անկախության քայլերը. ԼՂՀ-ում անցկացված հանրաքվեն և ընտրությունները (1991-1998թթ.), Ստեփ., 1998, էջ16 :*
[8] *Տե՛ս ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընթացիկ արխիվ:*

ԼՂՀ Խորհրդարանն ունեցավ հետևյալ մարմինները՝ Խորհրդարանի նախագահ, նախագահի տեղակալ, քարտուղար, 6 մշտական հանձնաժողով: Յուրաքանչյուր հանձնաժողովում ընդգրկված էր 5 պատգամավոր:

ԼՂՀ Խորհրդարանի 1995թ. հունիսի 23-ի առաջին նիստում Խորհրդարանի նախագահ ընտրվեց պատգամավոր Կ. Բաբուրյանը, տեղակալ՝ Լ.Գաբրիելյանը, քարտուղար՝ Է. Գաբրիելյանը[1]:

Միաժամանակ փաստենք, որ նոր խորհրդարանում քաղաքական ուժերի բացակայության պայմաններում վերջինս այդպես էլ չկարողացավ կատարել իր պատմական առաքելությունը:

Մինչդեռ ԼՂՀ նախագահի 1994թ. դեկտեմբերի 27-ի հրամանագրով ԼՂՀ վարչապետ նշանակվեց Լ.Պետրոսյանը, իսկ հունվարի 10-ին հաստատվեցին ԼՂՀ կառավարության նոր կազմը և կառուցվածքը: Մեկ այլ հրամանագրով ձևավորվեց կառավարության նախագահությունը[2]:

Հունվար և փետրվար ամիսներին Ս.Թևոսյանը նշանակվեց առաջին փոխվարչապետ, էկոնոմիկայի և ֆինանսների նախարար, Ժ.Պողոսյանն ու Յու.Ղազարյանը՝ փոխվարչապետներ, Ս.Բաբայանը՝ պաշտպանության նախարար, Ա.Իսագուլովը՝ ներքին գործերի նախարար, Ա.Ղուկասյանը՝ արտաքին գործերի նախարար, Է.Շահրամանյանը՝ շինարարության նախարար, Գ.Գասպարյանը՝ գյուղատնտեսության և պարենավորման նախարար, Ն.Ոսկանյանը՝ լուսավորության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար, Վ.Աղաբալյանը՝ առողջապահության նախարար, Ա.Աղասարյանը՝ ազգային անվտանգության պետական վարչության պետ, Յու.Հայրապետյանը՝ արդարադատության պետական վարչության պետ, Գ. Գրիգորյանը՝ բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական վարչության պետ, Վ. Սայադյանը՝ աշխատանքի և սոցապահովության պետական վարչության պետ[3]:

Միաժամանակ աշխատանք տարվեց տեղական կառավարման համակարգը բարեփոխելու ուղղությամբ: ԼՂՀ կառավարման կառուցվածքի վերափոխման և ՊՊԿ վերացման կապակցությամբ ԼՂՀ ՊՊԿ լիազոր ներկայացուցիչների ինստիտուտը վերակազմավորվեց՝ դառնալով Ստեփանակերտ քաղաքի և վարչակազմերի[4]:

Հետագայում կատարելագործվեց տեղական ինքնակառավարման համակարգը: Ժողովրդին իր իսկ ընտրած մարմինների միջոցով երկրի կառավարմանը մասնակից անելու նպատակով որոշվեց անցնել գյուղական համայնքների ընտրությանը: Գյուղապետերի աշխատանքն ավելի թափանցիկ և գործնական դարձնելու նպատակով գյուղապետներին կից ստեղծվեց ավագանու խորհրդի ինստիտուտը[5]:

Երկրի առջև ծառացած խնդիրները լուծելու նպատակով 1995թ. փետրվարի 7-ին ստեղծվեց ԼՂՀ նախագահին կից անվտանգության խորհուրդ: Անվտանգության խորհրդի կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ նախագահը, ԼՂՀ ԳԽ նախագահը, ԼՂՀ վարչապետը, ԼՂՀ պաշտպանության նախարարը,

---

[1] *Տե՛ս http://www.nankr.am/hy/32*

[2] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ, ԼՂՀ նախագահի 1995թ. հունվարի 10-ի հրամանագիր՝ N ՆՀ-09, N ՆՀ-10:*

[3] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ,*

[4] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ, ԼՂՀ նախագահի 1995թ. հունվարի 10-ի հրամանագիր՝ N ՆՀ-08:*

[5] *Տե՛ս **Բալայան Վ.**,Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ.), Ստեփանակերտ, 2012, էջ 230:*

ինչպես նաև ԼՂՀ արտաքին գործերի նախարարը, ԼՂՀ ներքին գործերի նախարարը և ազգային անվտանգության պետական վարչության պետը[1]:

Անվտանգության խորհրդի քարտուղարի պարտականությունները դրվեցին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Ա. Դանիելյանի վրա:

Այսպիսով՝ կառավարման նոր համակարգի ստեղծումը ոչ միայն հնարավորություն էր տալիս արագ հաղթահարելու պատերազմի հետևանքները, այլև ուշադրության կենտրոնում պահելու պետական ինստիտուտների և ենթակառուցվածքների ստեղծման, սոցիալ-տնտեսական ոլորտի հիմնախնդիրների լուծման հարցերը: Այս հիմնախնդիրների լուծման գործում վճռորոշ դերակատարություն ունեցավ ՀՀ-ի ցուցաբերած աջակցությունը:

Ժողովրդավարական ձևով ստեղծված պետությունը աստիճանաբար վերածվեց բռնատիրականի, որտեղ անձի իշխանությունը գերակայեց օրենքի իշխանությանը:

Ի դեպ, նշված ժամանակաշրջանի քաղաքական գործիչների շրջանակներում գոյություն ունեն կարծիքներ, ըստ որոնց՝ կադրային հարցերը, այդ թվում նաև նոր խորհրդարանական ընտրություններում պատգամավորների թեկնածուների առաջադրումն ու պաշտոնների նշանակումը հիմնականում համաձայնեցվում էր պաշտպանության նախարար Ս.Բաբայանի հետ:

Ցավոք, այժմ ժամանակը չէ դեռ ամբողջապես անդրադառնալու հայտնի և ոչ հայտնի, հատկապես՝ նշված ժամանակահատվածում Արցախում տեղի ունեցած ներքաղաքական մութ էջերին: Նշեք միայն, որ Արցախում Ռ.Քոչարյանի՝ ՊՊԿ ղեկավար լինելու, իսկ այնուհետև իշխանության ղեկին գտնվելու ընթացքում ձևավորվեց քաղաքական հալածանքների մշակույթ, սահմանափակվեց նաև խոսքի և մամուլի ազատությունը: Իսկ իշխանական որոշ պաշտոններում հայտնվեցին նաև հասարակության համակրանքը չվայելող անձինք, որոնց գործունեությունը բացասական հետք թողեց և՛ ժողովրդի բարոյահոգեբանության, և՛ երկրի պետական շինարարության որակի վրա:

Հետագայում ԳԽ-ի նոր ընտրություններից հետո՝ 1995թ. հունիսի վերջին, ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ «անհնազանդ» անդամներ ձերբակալվեցին: Տարբեր մեղադրականներով ձերբակալվեցին ԼՂՀ ԳԽ-ի նախագահի նախկին պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, ԼՂՀ ԳԽ-ի քարտուղար Վ.Հակոբյանը: Սակայն մեղադրականների բացակայության պատճառով վերջիններս ազատ արձակվեցին[2]՝ մինչ այդ ենթարկվելով խոշտանգումների ու ծաղրանքի (ՊՆ Ս.Բաբայանի կողմից): 1992-1994թթ. ձերբակալվեցին ԼՂՀ առաջին գումարման ԳԽ պատգամավորներ[3], ռազմական և քաղաքական գործիչներ, այդ թվում ԼՂՀ ԳԽ-ի մամլո քարտուղար Գ.Բաղդասարյանը («Նոր Արցախ, թե նոր Սպարտա» հոդվածի համար)[4], որոնք արժանացան նույն բախտին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

---

[1] *Տե՛ս ԱՀ նախագահի ընթացիկ արխիվ, ԼՂՀ նախագահի 1995թ. փետրվարի 7-ի հրամանագիր՝ N УП-22*

[2] *Տե՛ս* ***Հակոբյան Տ.,*** *նշվ. աշխ., էջ 183:*

[3] *Տե՛ս ԼՂՀ պետարխիվ, Ֆ.254, գ.1, պ.մ.6.կ.1, թ. 71-74£*

[4] *Տե՛ս «Խոսքեն», 14.12.1993:*